ԳԱՌՆԻԻ ՊԱԼԱՏԸ ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ

ՍՏԵՓԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Մենագրական բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել հելլենիստական շրջանի նշանավոր կենտրոնների պալատական համակառույցների մասին, սակայն մինչև այժմ պեղումներով հայտնի են դարձել միայն Գառնիի պալատական շենքերը, որոնք I դարում կառուցված հեթանոսական տաճարին շրջակա համալիրի օրգանական մասն են կազմում։

Գառնիի առաջին պեղումները (1909—1911), ձեռնարկված Ն. Մառի կողմից, բացեցին միայն տաճարը։ 1949 թ. իր աշխատանքներն սկսեց ՀՍՍՀ ԳԱ հնագիտական արշավախումբը (ղեկ. ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյան), և պեղումները ընդգրկեցին ամրոցի եռանկյունաձև տարածքի շատ հատվածներ։ Այս ընթացքում մաքրվեցին պարսպապատը և տաճարը։ Վերջինից հյուսիս-արևմուտք հայտնաբերվեցին պալատական մեծ կառույցը, բաղնիքը՝ իր նշանավոր խճանկարով, տաճարին հպված բոլորաձև մեծ եկեղեցու մնացորդները՝ կառուցված Ներսես կաթողիկոսի կողմից VII դարի կեսերին։ Պարզվեց, որ պալատական շենքի արևելյան մասն այդ ժամանակ արդեն լիովին ավերված է եղել, և VII դարի եկեղեցին շերտավորվել է նրա հյուսիս-արևելյան անկյան վրա։ Պալատական մեծ շենքը (40 մ երկարությամբ և 15 մ լայնությամբ) բաղկացած է եղել երկու հարակցված մասերից։ Հարավային կողմում տեղավորված է եղել երկհարկ մեծ դահլիճը (9,65×19,92), իսկ նրանից հյուսիս-արևմուտք ձգվել է բնակելի սենյակներից կազմված մասը։ Բաժանումները այնտեղ անհամեմատ փոքր են և հպված միմյանց[1]։

Այս մեծ պալատին ուղղահայաց, նրա հյուսիս-արևելյան կողմում կառուցված է եղել բաղնիքի շենքը, որը և պարփակել է տաճարից հյուսիս-արևմուտք կազմավորված հրապարակը։ Ընդ որում համալիրի դոմինանտը եղել է տաճարը՝ տեղավորված սարահարթը արևելքից երիզող անդնդախոր կիրճի ուղղությամբ։ Տարակույս չի կարող լինել, որ այստեղ և՛ հնում, և՛ միջնադարում եղել են նաև այլ, այժմ լիովին անհայտացած կառույցներ։ Շինարարական կյանքն այստեղ շարունակվել է ընդհուպ մինչև XIII դար, հանգամանք, որն ակնհայտ է պարսպի և ամրոցի ներսում եղած շենքերի կառուցողական ձևերում։

Հայտնի է, որ կանոնավոր մշակված, զուգահեռանիստ քարերով և արճճապատ երկաթյա գամերով ամրացած պատի շարքի տեխնիկան բնորոշ էր հատկապես վաղ շրջանի կառույցներին, մինչդեռ պատի որմածքը արդեն առանց գամերի օգտագործման, համեմատաբար փոքր և ճեղքված քարերից, կրաշաղախի օգտագործման պայմաններում ի հայտ է գալիս մի քանի դար հետո։ Պատի որմածքի այս երկու ձևերը հանդիպում են Գառնիում, ընդ որում առաջին տարբերակը բնորոշ է պարսպապատի հնագույն մասերին և տաճարին, իսկ երկրորդը՝ պալատի և բաղնիքի շենքերին։

Գառնիի համակառույցի տարբեր շենքերում իրենց դրսևորումն են գտել պատմական տարբեր շրջաններ՝ նրանց համար այնքան բնորոշ և յուրովի կառուցողական տեխնիկայով հանդերձ։ Այդ տեսնում ենք հզոր պարսպապատում, որտեղ առկա են տարբեր կառուցողական տեխնիկա ունեցող հատվածների ուշագրավ շերտավորումներ։ Այս ամենը որոշակի արձագանքն էր մի երևույթի, որն իրավացիորեն նշում է Բ. Առաքելյանը. «Երրորդ դարի վերջում և չոր-

---

[1] Ա. Սահինյան, Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, Երևան, 1983, էջ 49։

լորդ դարում Առաջավոր Ասիայի և Հայաստանի կառուցողական տեխնիկայում տեղի ունեցան մեծ փոփոխություններ, պատերը սկսեցին կառուցել ոչ թե չոր շարքով, այլ շաղախի օգտագործման միջոցով»[2]։

Հեթանոսական տաճարի թվագրությունը՝ հիմնված ճարտարապետական ձևերի և վիմագրական տվյալների վրա, լիովին համահնչյուն է նրա կառուցողական տեխնիկային (մեծադիր զուգահեռանիստ քարեր՝ ամրացված երկաթյա գամերի միջոցով շաղախի բացակայության պայմաններում), սակայն մինչև այժմ շատ բան պարզ չէ պալատական կառույցի թվագրության հարցում։

Դժվար է համաձայնվել Ա. Սահինյանի այն կարծիքին, թե «հայտնի է, որ Հռադամիզդի հանկարծակի հարձակումից ահաբեկված, Միհրդատը 52-ին փախել և պատսպարվել է Գառնիի ամրոցի ապարանքում։ 52-ին հռոմեական զորքերի կողմից Արտաշատի կործանման ժամանակ ավերածությունների են ենթարկվում նաև Գառնիի ամրոցը և նրա ներսում գտնվող պալատական կառույցները։ Հնարավոր է, որ ուսումնասիրվող պալատական դահլիճը պատկանի մինչև 59-ի ավերումները գոյություն ունեցած պալատական շենքին»[3]։ Տակիտոսի մոտ, որին վկայակոչում է Ա. Սահինյանը, խոսք չկա պալատի մասին։ Նա գրում է միայն, որ Միհրդատը, ներխուժումից ահաբեկված, փախել և պատսպարվել էր Գառնիի ամրոցում, որն «ապահով էր թե՛ տեղադրության և թե՛ հռոմեական կայազորի պաշտպանության շնորհիվ»[4]։ Չի կարելի չնկատել նաև, թե ինչպիսի արմատական տարբերություններ կան տաճարի և պալատի կառուցողական ձևերում, և ոչ մի կերպ չի կարելի համաձայնվել պալատի այն թվագրության հետ, որը նրան ավելի առաջ է տանում (մինչև 59 թ.), քան տաճարը (77 թ.)։ Այն հանգամանքը, որ և՛ բաղնիքը, և՛ պալատը կառուցված են ճիշտ և ճիշտ նույն շինարարական տեխնիկայով և կազմում են տաճարից արևմուտք ձևավորված համալիրի օրգանական մասերը, ոչ մի տարակույս չի թողնում, որ երկուսն էլ կառուցվել են միևնույն շինարարական շրջանում։ Մյուս կողմից բաղնիքի համոզիչ թվագրումը երրորդ դարի երկրորդ կեսով (այնտեղ հայտնաբերված խճանկարի հիման վրա)[5] որոշակի կռվան է ամբողջ պալատական համալիրը ևս նույն այդ ժամանակով թվագրելու համար (նկ. 1)։

Համալիրի քաղաքաշինական և ճարտարապետական վերլուծությունը տարակույս չի թողնում, որ բաղնիքի շենքը ի սկզբանե կազմել է պալատական համակառույցի օրգանական մասը. հռոմեական ճարտարապետության մեջ ամառանոցների, վիլլաների, հովանոցների կառուցողական պրակտիկայում տերմերի, բաղնիքների առկայությունը պարտադիր էր։ Հիպոկաուստ հատակով, մի քանի բաժանումներից բաղկացած բաղնիքները ուշ հելլենիստական շրջանում և վաղ միջնադարում լայնորեն տարածված էին ամբողջ Առաջավոր Ասիայում։ Պատահական չէ, որ այդ ավանդույթներն անցել են հայկական միջնադար, և նման բաղնիքներ են կառուցվել Վաղարշապատում, Դվինում, Զվարթնոցում, Անիում, Ամբերդում՝ կազմելով պալատական հորինվածքների անբաժանելի մասը։

Ուշագրավ է այն որոշակի ընդհանրությունը, որն առկա է Զվարթնոցի և Գառնիի ճարտարապետական համալիրների միջև։ Եթե Գառնիում պալատը տեղավորված է տաճարից արևմուտք և նրա մի ծայրում է բաղնիքը, ապա Զվարթնոցում պալատական մեծ շենքը տաճարի հարավակողմում է, իսկ նրա արևելյան ծայրում՝ Գառնիի բաղնիքի նման հիպոկաուստ հատակ ունեցող բաղնիքը։ Անիում նույնատիպ բաղնիք տեղավորված է եղել պալատի կենտրոնում։ Այս ամենը համոզում է, որ Գառնիում բաղնիքը ժամանակին կազմել

---

2 Б. Н. Аракелян, Гарни, I, Ереван, 1952, с. 67.

3 Ա. Սահինյան, նշվ. աշխ., էջ 52։

4 «Կայուս Կորնելիուս Տակիտոսի տարեգրությունները», Երևան, 1941, էջ 55։

5 Б. Н. Аракелян, Гарни, II. Ереван, 1957, с. 34.

է պալատական համակառույցի օրգանական մասը, կառուցվել է նրա հետ՝ կազմելով մեկ միասնական ամբողջություն։ Այժմ մենք բոլոր հիմքերն ունենք եզրակացնելու, որ նույն ճարտարապետական համալիրի օրգանական մասը կազմող պալատական շենքը, կառուցված ճիշտ և ճիշտ նույն շինարարական տեխնիկայով, ինչ բաղնիքը, պետք է որ կառուցված լինի նույն շինարարական շրջանում, այն է՝ երրորդ դարի վերջին։ Դժբախտաբար և՛ պալատից, և՛



Նկ. 1. Գառնիի ճարտարապետական համալիրի ընդհանուր հատակագիծը. Ա) անտիկ տաճար, Բ) պալատական դահլիճ, Գ) պալատական շենքի մնացորդներ, Դ) բաղնիք, Ե) քառաբսիդ եկեղեցի, Զ) մատուռ (Մաշտոց կաթողիկոսի դամբարան)։

բաղնիքից մեզ են հասել պատերի ներքևի մասերը միայն։ Բաղնիքի ճոխ հարդարանքից մի նմուշ է մնացել՝ հանդերձարանի խճանկարային կոմպոզիցիան։ Սակայն այդ էլ բավական է պատկերացնելու, թե ինչպիսի հարուստ մշակում են ունեցել թագավորանիստ պալատական համալիրի շենքերը, հատկապես երկհարկ պալատական կառույցը, որի ներքնահարկը, ինչպես պարզեցին պեղումները, ծածկված է եղել գունազարդ սվաղով։

Կանգ առանք Գառնիի կառույցների միայն շինարարական և կառուցողական կողմի վրա և փորձեցինք ճշտել համալիրի աշխարհիկ շենքերի, հատկապես պալատի, կառուցման ժամանակը։ Նշենք, որ մեզ հասած մի շարք կարևոր վիմագրական և մատենագրական վավերագրերի վերլուծությունը էա-

կան նշանակություն է ստանում համալիրի ամեն մի կառույցի թվագրության ճշտման հարցում։

Գառնիի ամրոցում պեղումների ժամանակ բացված բոլորաձև կացարանները վկայում են, որ այստեղ շինարարական կյանք է եղել դեռևս բրոնզե դարում[6]։ Տաճարից ոչ հեռու, 1963-ին հայտնաբերվեց ուրարտական Արգիշտի Ա-ի (781—760) սեպագիր արձանագրությունը[7]։ Մովսես Խորենացին, հիմնվելով ավանդությունների վրա, գրում է, որ Գառնիի ամրոցը հիմնադրել է Հայկ Նահապետի թոռ Ամասիայի որդի Գեղամը, որի թոռան՝ Գառնիկի, անունով էլ կոչվել է Գառնի[8]։

Ամրոցի վերաշինման առաջին փաստական վավերագիրը 1945 թ. հայտնաբերված հունարեն արձանագրությունն է՝ փորագրված բազալտե զուգահեռանիստ քարի վրա. այն ի սկզբանե տեղավորված է եղել պարսպապատի վրա, բայց հատկապես նրա որ մասում, դժվար է ասել։ Սակայն թագավորի անունից գրված այս մեծ արձանագրությունը չէր կարող լինել աննկատ տեղում (այն թերևս գտնվել է ամրոցի մուտքից ոչ հեռու), և արդեն չորս տասնամյակ չի հեռանում հետազոտողների ուշադրությունից[9]։

Նկ. 2. Գառնի։ Պալատական շինքի մնացորդներ։

---

6 Է. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. երրորդ հազարամյակում, Երևան, 1967, էջ 15։

7 Б. Н. Аракелян, Урартская клинообразная надпись из Гарни («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 292).

8 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 41։

9 Ստ. Լիսիցյան, Գառնիի տաճարի հունարեն արձանագրությունը («Սովետական Հայաստան», 23. IX. 1945), Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, Ա. Արրահամյան, Գառնիի հունարեն արձանագրությունը («Էջմիածին», 1947, մարտ—ապրիլ), К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, с. 187; Б. Н. Аракелян, Гарни, I, с. 52; Գ. Սարգսյան, Գառնիի հունարեն արձանագրության շուրջը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1956, № 3)։ Հ. Բարթիկյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին («Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, էջ 229)։

Հրատարակվել են վերծանության մի շարք տարբերակներ. ընդ որում բուն կառույցներին վերաբերող հարցերից առավել շատ վեճերի աղբյուր է եղել այն, թե Տրդատ Ա արքան ինչ է կառուցել ամրոցի ներսում։ Հետազոտողների մի խումբը այդ կառույցը նշող բառի տակ տեսնում է պարանք, իսկ մյուս խումբը՝ տաճար։

Այն հանգամանքը, որ Բ. Առաքելյանը «տաճար» բառից հետո հարցական նշան է դնում, պատահական չէ. «ΑΝΑΚΤΟΡΟΝ» բառը, ըստ Հ. Բարթիկյանի, «կոնկրետ նշանակում է պալատ, պարանք, նաև՝ սրբատեղի, տաճար»[10]։

Ն. Մառը, խոսելով հայկական և վրացական աշխարհիկ և պաշտամունքային ճարտարապետությունների միջև եղած առնչությունների մասին, հարց է դնում. արդյո՞ք պաշտամունքային կառույցների գմբեթները իրենց նախորդները չեն ունեցել աշխարհիկ շենքերի համապատասխան ձևերում և արդյո՞ք նման կապի արտահայտությունը չէ, որ և՛ հայերենում, և՛ վրացերենում պաշտամունքային կառուցվածքը՝ եկեղեցին, կոչվում է նաև հին պարսկերենում հայտնի taçara անունով, որտեղ այն նշանակում է «պալատ, տաճար»[11] (նկ. 2)։

Ուշագրավ է, որ համանման երևույթ նկատվում է նաև հայկական ճարտարապետության համապատասխան կառույցների հիշատակման ժամանակ, երբ տաճար տերմինը լայնորեն օգտագործվում է և՛ պաշտամունքային մեծ կառույցների, և՛ արքունական պալատների դահլիճները բնորոշելու համար[12]։ Պատահական չէ, որ նույն բառը Գառնիի արձանագրությունը հետազոտողները վերծանել են երբեմն տաճար, երբեմն էլ պալատ։

Այս պայմաններում վճռական խոսքը պետք էր սպասել պեղումներից. դրանք որոշակիորեն ցույց տվեցին, որ առաջին դարով և հատկապես առաջին դարի երկրորդ կեսով է թվագրվում տրդատաշեն տաճարը, որի և՛ ամբողջ հորինվածքը և ճարտարապետական ձևերը, և՛ շինարարական տեխնիկան լիովին համապատասխանում են նշված թվագրությանը։ Տարակույս չի մնում, որ հենց այս կառույցն է, որ հիշատակված է Տրդատ Ա-ի հայտնի արձանագրության մեջ։

Գառնիի կառուցվածքների մասին խիստ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Մովսես Խորենացին։ Խոսելով Տրդատ Գ-ի շինարարական գործունեության մասին, նա գրում է. «Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնւոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ, յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրոշուածովք, բարձր քանդակաւ ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ, և գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով»[13]։

Մասնագիտական գրականության մեջ Խորենացու այս տողերը տարբեր մեկնաբանությունների առիթ են տվել, որոնց զգալի մասը արմատավորվել էր դեռևս այն ժամանակ, երբ պեղումները չէին ավարտվել, և ո՛չ պալատը, ո՛չ բաղնիքը հայտնի չէին։

Ամփոփելով Մովսես Խորենացու հիշատակության մեկնաբանությունները, Հ. Բարթիկյանը նշում է. «Ժամանակակից ուսումնասիրողները, քաջածանոթ լինելով Գառնիի հեթանոսական տաճարին, որը լրիվ բացվել էր Ն. Մառի և Ցա. Սմիռնովի պեղումներից հետո, այդ «տուն հովանոց»-ը Մովսես Խորենացու նկարագրությունից ելնելով («Մահարձանօք, սքանչելի դրոշուածովք, բարձր քանդակաւ») համարել են Գառնիի հեթանոսական տաճարը։ «Տուն հո-

10 Հ. Բարթիկյան, նշվ. հոդվ., էջ 230։

11 Ленинградское отделение архива АН СССР, архив Н. Я. Марра, фонд А—940, с. 110.

12 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1942, էջ 354։

13 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 241։

վանոց»-ը նույնացնելով Գառնիի հեթանոսական տաճարի հետ և Խորենացուց գիտենալով, որ Տրդատը իր շինությունների մասին գրավոր հիշատակություն է թողել հունարեն տառերով գրված արձանագրության մեջ, և վերջապես 1945 թ. հայտնաբերված հունարեն արձանագրությունը համարել հենց այն, ինչի մասին մատնացույց էր արել պատմահայրը»[14]։

Հետազոտությունները ցույց են տալիս, որ այս տեսակետները պետք է հիմնովին վերանայվեն։ Դժվար չէ տեսնել, որ Խորենացու հիշատակությունը բաժանվում է երեք հատվածի. առաջին մասը վերաբերում է պարսպապատի վերաշինությանը (կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնւոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ), երկրորդ մասը, որտեղ նկարագրվում են ամրոցի ներսում կատարված շինարարական աշխատանքները (յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրոշուածովք, բարձր քանդակաւ ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ) և վերջապես այն արձանագրության մասին, որը դրոշմվել է պալատի պատին (և գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով)։

Ինքնին պարզ է, որ «որձաքար... կապարով մածուցեալ» որմածքը վերաբերում է հատկապես պարսպապատին և ոչ երբեք հովանոցին, իսկ արձանագրության մասին հիշատակությունը տարակուսանք չի թողնում, որ Խորենացին անձամբ տեսել ու կարդացել է այն պալատի պատին։ Քննենք այս հատվածներն առանձին, առանձին։ Իր աշխատության մեջ Խորենացին մեկ այլ տեղ հիշատակում է Գառնիի ամրոցի շատ ավելի վաղ կառուցված լինելը, և հասկանալի է, որ խոսքն այստեղ ամրոցապատի վերաշինության և ամրացման մասին է, այսինքն՝ այնպիսի աշխատանքների, որոնք ձեռնարկվում էին ամեն մի ամրոցում, պարբերաբար, նրանց գոյության ամբողջ ընթացքում։

Արդ՝ ի՞նչ է Խորենացու հիշատակության երկրորդ մասում նշված «հովանոցը»։ Ուսումնասիրողների մոտ կասկած չկա, որ այն աշխարհիկ շենք է, պալատական մի կառույց։ Դեռևս Մ. Էմինը Խորենացու իր առաջին թարգմանության մեջ այն անվանել է «ամառային պալատ» «летный дворец»[15], *իսկ հաջորդ թարգմանության մեջ՝* «вилла»[16]։

Բ. Առաքելյանը այն թարգմանում է «дом прохлады» *կամ* «летний дом»[17]։

Ուշագրավ է, որ հենց ինքը՝ Խորենացին, նույն այդ իմաստով էլ մի քանի տեղ օգտագործում է հովանոց բառը, որը Ստ. Մալխասյանցը թարգմանում է որպես «ամառանոց»։ Այսպես, խոսելով Վաղարշակ թագավորի մասին, Խորենացին գրում է, որ նա Տայքում «Գեղեցիկ կերպով կարգավորում է այս երկիրը... իր թագավորության վայելչության համար այնտեղ ամառանոցներ *պատրաստելով, երբ ամառները դեպի հյուսիս գնալու լինի...»*[18]։

Խոսելով Խոսրով Կոտակի մասին, Խորենացին գրում է. «...զարքունիսն փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի»[19]։ *Ստ. Մալխասյանցը այս հատվածը թարգմանում է հետևյալ կերպ. «Նաև արքունիքը փոխադրում է անտառից վերև մի բլուրի վրա և շինում է արևից պատսպարված ապարանք, /տեղը/ պարսկական լեզվով կոչվում է Դվին, որ նշանակում է բլուր»*[20]։

Այսպիսով, կասկած չկա, որ Խորենացին հիանալի գիտեր, թե ինչ տիպի, ինչ կարգի կառույցի մասին է խոսքը, և ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ նա

---

14 *Հ. Բարթիկյան, նշվ. հոդվ., էջ 229։*

15 «История Армении Моисея Хоренского», М., 1859, с. 159.

16 «История Армении Моисея Хоренского», новый перевод Н. Эмина, М., 1893, с. 138.

17 Б. Н. Аракелян, Гарни, I, с. 8.

18 *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 134։*

19 *Նույն տեղում, գիրք երկրորդ, գլ. 6։*

20 *Նույն տեղում, էջ 245։*

կարող էր Գառնիի եռթանոսական տաճարը համարել Տրդատի քրոջ՝ Խոսրովիդուխտի հովանոցը։ Խորենացին, որը երիտասարդական տարիներին եղել էր Արևմուտքում, Ալեքսանդրիայում, տեսել հունա-հռոմեական տասնյակ տաճարներ, կարո՞ղ էր շփոթել նույնատիպ կառույց հանդիսացող Գառնիի տաճարը հովանոցի հետ, ինչպես ենթադրում է ուսումնասիրողների մեծ մասը։ Մյուս կողմից՝ այն հանգամանքը, որ նույն հեթանոսական տաճարի ներսում, թերևս IV դարում (ինչպես այդ պարզեցին Ն. Մառի պեղումները), քրիստոնեական եկեղեցի է կառուցվել, երկաբսիդ փոքրիկ մատուռ, հավանաբար Տրդատի և Խոսրովիդուխտի հիշատակին, դարձյալ բացառում է այս կառույցը որևէ կերպ աշխարհիկ շենք համարելու հնարավորությունը։ Այն դրույթը, թե Խորենացին Տրդատ Ա-ի գործերը վերագրել է Տրդատ Գ-ին, իսկ հեթանոսական տաճարը համարել Խոսրովիդուխտի հովանոց, բնավ չի կարող ընդունելի լինել։ Մնում է ենթադրել, որ Խորենացին իսկապես տեսել է Խոսրովիդուխտի հովանոցը և այն էլ նկարագրել։ Որ Խորենացին իսկապես եղել է Գառնիում, և, անշուշտ, կարդացել պարսպապատի վրա եղած Տրդատ Ա-ի արձանագրությունը, ոչ մի տարակուսանք չեն հարուցում։

Հայտնի է, որ IV դարում Գառնիում եպիսկոպոս է եղել։ Ամրոցից ոչ հեռու գյուղի տարածքում է գտնվում V դարով թվագրվող միանավ, խիստ ուշադրավ եկեղեցին։ Որ պալատական կառույցները V դարում դեռ կարող էին պահպանված լինել, վկայում է Դվինի VII դարի սկզբում կառուցված կաթողիկոսական պալատի երկարակեցությունը, որը կանգուն է եղել մինչև X դար[21]։ Իսկ այդ հանգամանքը, որ VI—VII դարերում և՛ Դվինում, և՛ Զվարթնոցում կառուցվել են Գառնիի բաղնիքի նման հիպոկաուստ տիպի հատակ ունեցող բաղնիքներ, է՛լ ավելի է հնարավոր դարձնում Գառնիի պալատական համալիրի գոյությունը VI դարում և VII դարի առաջին կեսում։ 607 թ. Աբրահամ կաթողիկոսի՝ Դվինում գումարած եկեղեցական ժողովին մասնակցել է Գառնիի երեցը՝ «Իսրայէլ Գառնոյ»։ Բացառված չէ, որ Գառնիի պալատը ավերվել է արաբական արշավանքների ժամանակ, թերևս VII դարի առաջին կեսում[22]։

Այս առնչությամբ զգալի հետաքրքրություն են ներկայացնում հորինվածքային այն որոշակի ընդհանրությունները, որ կան Գառնիի և Զվարթնոցի պալատական համալիրների միջև։ Այդ վերաբերում է թե՛ կառույցների ընդհանուր դասավորությանը, թե՛ գահասրահի խորշերին, թե՛ բնակելի մասի եզրին բաղնիքի առկայությանը։ Հայտնի է, որ Ներսես Գ. կաթողիկոսի շինարարական գործունեությունը ծավալվեց հատկապես Տրդատի և Գրիգոր Լուսավորչի հետ կապված վայրերում (Բագավան, Խոր Վիրապ, Զվարթնոց) և չի կարելի բացառված համարել, որ Գառնիի բոլորաձև եկեղեցին 659-ին վեր խոյացավ Տրդատի հիշատակին, ճիշտ այնպես, ինչպես Խոր Վիրապի եկեղեցին՝ նվիրված էր Գրիգոր Լուսավորչին։ 659-ին Գառնիի պալատն արդեն (համենայն դեպս մեծ դահլիճը) լիովին կործանված էր, և Ներսեսը իր տաճարը հիմնադրեց՝ հպված հեթանոսական տաճարին, որն արդեն IV դարում սրբագործվել էր, և նրա ներսում եկեղեցի էր կառուցվել։ Այսպիսին է ահա պալատի պատմությունը, մի պալատ, որն ամենայն հավանականությամբ դեռևս կանգուն էր V դարում, և Մովսես Խորենացին իսկապես տեսել էր նրա շքեղ հարդարանքը, քանդակազարդ մշակումը։ Ընդհանրացած էր այն կարծիքը, որ ի տարբերություն Բյուզանդիայի, Հայաստանում քրիստոնեության տարածման պահին անտիկ շրջանի տաճարներն ու հատկապես քանդակները իսպառ ոչնչացվում էին, ջարդուփշուր արվում։ Սակայն աստիճանաբար հավաքվում էին որոշակի կվաններ՝ պնդելու, որ ավերվում էին հատկապես պաշտամունքային բնույթի, հեթանոսական տաճարների ներսում դրված քանդակները, և թերևս այլ էր վերաբերմունքը աշխարհիկ բնույթի, նախնիների քանդակների նկատմամբ։ Արդյո՞ք այդ չի վկայում IV դարի 60-ական թվականներին կա-

21 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 122։
22 Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան, Գառնի, III, Երևան, 1962, էջ 13։

ուցված Աղցի Արշակունիների դամբարանի սյուժետային քանդակներից մեկը, որտեղ պատկերված է մերկ հերոսը (Հայկը), որը մաքառում է վարազի հետ։ Անտիկ քանդակագործության ավանդների ոչ պակաս ցայտուն դրսևորումն ենք տեսնում Օձունի հայտնի քանդակաշարերում և վաղ միջնադարյան մեմորիալ ճարտարապետության մեջ։ Այդ ավանդույթները հասնում են մինչև Աղթամար, որտեղ բարձրաքանդակների շարքում առկա են անտիկ շրջանից եկող տոհմապատումների արձագանքները, երբ անտիկ շրջանին բնորոշ հագուստներով երիտասարդները մաքառում են առյուծների և ցուլերի հետ[23]։ IV—V դարերում պահպանված այդ աշխարհիկ քանդակները թերևս ոչնչացվել են արդեն արաբական տիրապետության կրոնական անհանդուրժողականության քաղաքականության պայմաններում, և հենց այդ է պատճառը, որ նույն Դառնիի հարուստ քանդակագործական հարդարանքից մեզ են հասել փշրանքներ միայն, սակայն այդքանն էլ անվերապահորեն վկայում է Գառնիի պալատական կառույցների արտակարգ շքեղ մշակման մասին։ Այս շարքից առավել նշանակալիցն է բաղնիքի հանդերձարանի հայտնի խճանկարը, որի գոյությունն իսկ այս առօրյա օգտագործման համար նախատեսված շենքում տարակույս չի թողնում, թե ինչպիսի շքեղություն է եղել բուն պալատական կառույցում։

Թե՛ պալատական շենքի, թե՛ բաղնիքի պատերը մեզ են հասել առանց երեսապատման քարերի, որոնք դարերի ընթացքում պոկվել են, տարվել։ Սակայն պեղումներից հայտնաբերված քարերը (բազալտե սալեր, իրենց ճարտարապետական մանրամասներով) գալիս են ասելու, որ պատերը բոլորն էլ երեսապատված են եղել, և այստեղ առկա է եղել հռոմեական կառուցողական տեխնիկայի մյուս տարբերակը, որտեղ ի տարբերություն ամբողջական, զուգահեռանիստ քարերից կազմված շոր շարքի, պատի զանգվածը արվում էր ճեղքված քարից ու աղյուսից, շաղախվում կրաբետոնով և երեսապատվում մարմարե սալերով, ինչպես այդ տեսնում ենք հռոմեական շատ կառույցներում։ Օրինակ՝ Կարակալլայի տերմերը Հռոմում, որտեղ այժմ վեր են բարձրանում կրաբետոնի պատերը միայն և պատերի ներքևի մասերում, այն էլ միայն տեղ-տեղ, պահպանվել են մարմարյա երեսապատման սալերը։

Գառնիում այդ սալերը բազալտից են եղել, և նրանց հաստությունը չի անցել 15 սմ-ից։ Պեղումների ժամանակ հայտնաբերվել են որմնասյուներ կրող երկու սալեր, որոնցից մեկի վրա ոչ մեծ կիսաշրջանաձև հատվածքով մի որմնասյուն կա[24], իսկ մյուս քարի որմնասյունը ունեցել է ավելի զգալի չափեր[25]։ Անկասկած, դրանք պատկանել են պատերի տարբեր մշակում ունեցող հատվածների, թերևս համապատասխանաբար ինտերիերին և արտաքին պատերին (նկ. 3)։ Միանգամայն իրավացի է Բ. Առաքելյանը, որ այդ քարերը համարում է երրորդ դարի վերջում և չորրորդ դարում տարածված շինարարական տեխնիկայի արգասիք, նշելով միաժամանակ, որ հետագայում հայկական ճարտարապետության մեջ ընդհանրացած որմածքի տեխնիկան այլ էր, և բացառվում է նման երեսապատման քարեր օգտագործելու հանգամանքը[26]։

Բացի բազալտե բեկորներից պեղումների ժամանակ, տարբեր տեղերում, հայտնաբերվել են ճարտարապետական հարդարանքների բեկորներ՝ արդեն մարմարից, որոնք թերևս պատկանել են համակառույցի աշխարհիկ ամենանշանավոր շենքին՝ պալատին[27]։ Դրանք պատկանել են ինտերիերի խորշերին,

---

23 Ս. Մնացականյան, Աղթամար, Երևան, 1983, էջ 70։

24 Б. Н. Аракелян, Гарни, I, с. 54.

25 Նույն տեղում, էջ 53։

26 Բ. Առաքելյանը գրում է. «Որմնասյուներ ունեցող սալերը որոշ պատկերացում են տալիս Գառնիի հնագույն մոնումենտալ կառույցների մասին։ Դրանք ընդարձակ դահլիճներ ունեցող շենքեր էին, որոնց ծածկերը հենվել էին որմնասյուների վրա։ Դահլիճների պատերը սվաղված են եղել, և թերևս ծածկված որմնանկարներով» (նույն տեղում, էջ 59)։

27 Բ. Առաքելյանը նշում է, որ «Ամրոցի արևելյան պատի մոտ պեղված կառույցի հատա-

արձանների պատվանդաններին և այլն։ Հայտնաբերվել են նաև մարմարե նուրբ սյուների բեկորներ՝ թեքադիր կանելյուրներով հանդերձ։ Ինտերիերի մշակման այս եղանակը լավ հայտնի է հռոմեական վիլլաներում և առանձնատներում, և այս ձևերի ի հայտ գալը Գառնիում ակնհայտորեն վկայում է Խոսրովիդուխտի պալատի շքեղության մասին։ Առանձնակի ուշագրավ են ոչ մեծ քանդակների մնացորդների հայտնաբերումը, որոնք որպես կանոն, դըր-



Նկ. 3. Որմնասյուներ՝ երեսապատման սալերի վրա։

ված են եղել դահլիճների ներսում, և դրանց չափերը լիովին համապատասխանում են ինտերիերի մշակմանը։ Դրանցից առավել նշանակալիցը 1963 թ. պալատի առջևի հրապարակում հայտնաբերված մի ֆիդուրի անդրին է՝ 50 սմ բարձրությամբ։ Քանդակի ընդհանուր բարձրությունը, ինչպես նշում է Բ. Առաքելյանը, կազմել է մոտ 90 սմ[28]։ Այն որ քանդակի մեջքի ձախակողմյան մասը մշակված չէ, տարակույս չի թողնում, որ այն հենված է եղել պատին և դրված է եղել խորշի մեջ, ընդ որում նույն պեղումների ժամանակ հայտնա-

կին գտնվեցին 70 մարմարե բեկորներ, որոնք պատկանել էին առանձին կանգնած քանդակներին և որմնաքանդակներին, և ջարդվել ու դեն էին նետվել, հավանաբար, 4-րդ դարի սկզբին, քրիստոնեության ընդունման ժամանակ։ Բեկորների երկրորդ մեծ խումբը պատկանել է ճարտարապետական կառույցների ներքին հարդարանքին... Տարակույս չի մնում, որ Գառնիի որոշ կառույցների ներքին հարդարանքում օգտագործվել է նաև մարմարը» (Б. Н. Аракелян, Гарни, II, с. 73—74)։ Ուշագրավ է, որ այդ բեկորները հայտնաբերվել են հատկապես հեթանոսական տաճարի, պալատական համալիրի և բաղնիքի շրջակայքում ձեռնարկված պեղումների ժամանակ։

28 Б. Н. Аракелян, Очерки по истории искусства древней Армении, Ереван, 1976, с. 24.

բերվել են հենց այդպիսի քանդակների պատվանդաններ[29]։ Որ նման խորշեր եղել են Գառնիի պալատում և ձգվել են երկայնական պատերի ամբողջ տարածքով (ամեն կողմում յոթական խորշ), հաստատում են առաջին, կիսանրկուղային հարկում եղած խորշերը։ Դրանք, անշուշտ, պատահական չէին, և որոշակի հիմքեր կան ենթադրելու, որ նույն հորինվածքը շարունակվել է նաև երկրորդ հարկի դահլիճում։ Կամարակապ այդ խորշերն շատ հարմար էին արձաններ տեղավորելու համար, հանգամանք, որը լայն տարածում ուներ հռոմեական պալատներում և վիլլաներում։ Արևելքում այն միահյուսվում էր նախնիների պաշտամունքի հետ։ Մովսես Խորենացին հիշատակում է, որ Վաղարշակ թագավորը իր նախնիների քանդակները տեղավորել է Արմավիրում կառուցված տաճարում։ Ոչ պակաս ուշագրավ է նախնիների քանդակների առկայությունը պարթևական Իրանի մայրաքաղաք Նիսայում կառուցված տաճարում և պալատում[30]։ Այդ ավանդույթը շարունակվել է նաև հայկական միջնադարում։ Օձունում, VI դարի մեմորիալ մոնումենտի կոթողների վրա առկա են հուշարձանի կտիտորների նախնիների բարձրաքանդակները, նախնիներ, որոնք օժանդակել են Գրիգոր Լուսավորչին և Տրդատին՝ քրիստոնեության տարածման գործում[31]։ Աղթամարում գլխավոր գոտու քանդակաշարում տեղ են



Նկ. 4. Մարմարե քիվի բեկորներ։

29 Բ. Առաքելյանը ենթադրում է, որ այն կազմել է մարմարե սարկոֆագի մի մասը (նույն տեղում)։ Լիովին ընդունելով սարկոֆագի գոյությունը, մեր կարծիքով նման քանդակներ ազատ կերպով կարող էին տեղավորված լինել նաև պալատի խորշերում։

30 Г. А. Пугаченкова, Архитектура Средней Азии («Всеобщая история архитектуры в 12 томах», т. I, М., 1970, с. 358).

31 Սուր. Մնացականյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, 1982, էջ 120։

գտել Արծրունյաց տոհմի փառապանծ նախնիները՝ սկսած հելլենիստական ժամանակներից մինչև ութերորդ դար, մինչև Համազասպ և Սահակ եղբայրները[32] (նկ. 4)։

Խորենացու խոսքերն այն մասին, որ Տրդատ Գ-ն կառուցել էր «տուն հովանոց», «մահարձանօք, սքանչելի դրոշուածովք, բարձր քանդակաւ», լիովին հաստատվեցին սլեղումների ժամանակ հայտնաբերված մանրամասներով։ Պատվանդանի վրա դրված բոլորաձև քանդակները, ամենայն հավանականությամբ, ներկայացրել են թագավորական տան նախնիներին և լիովին համապատասխանում են Խորենացու «մահարձանօք» տերմինին։ Պատերին հպված, կիսածավալային, գորելեֆ քանդակների մնացորդները, նրբագեղ զարդագոտիների հատվածները լիովին համահնչյուն են Խորենացու «բարձր քանդակաւ» տերմինին, իսկ հայտնի բաղմաֆիգուր, հլանալի մշակված խճանկարը՝ «սքանչելի դրոշուածովք» արտահայտությանը (նկ. 5.)։

Նկ. 5. Տղամարդու քանդակի մաս (մարմար)։

Անդրադառնանք այժմ Խորենացու հիշատակության երկրորդ մասին։ Այստեղ ևս մենք ոչ մի հիմք չունենք չհավատալու Խորենացուն, երբ նա խոսում է Տրդատ Գ-ի կողմից պալատի վրա թողած արձանագրության մասին

32 Ս տ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 70։

(և գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով)։ Հետազոտողների մեծ մասը գտնում է, որ Խորենացու նշած այդ արձանագրությունը հենց այն է, ինչ հայտնաբերվեց 1945 թվականին, թեև ակնհայտ է միաժամանակ, որ վերջինս գտնվել է պարսպի վրա, իսկ Խորենացին խոսում է պալատի վրա եղած արձանագրության մասին[33]։ Մյուս կողմից, Խորենացին բերում է հատկապես պալատին վերաբերող այնպիսի մանրամասներ, որոնք բնավ չկան պարսպապատի արձանագրության մեջ, թեև միաժամանակ չի կարելի չնկատել, որ երկու դեպքում էլ խոսվում է թագուհու համար նրա պատվին ձեռնարկած կառույցների մասին։ Բացառված չպետք է համարել, որ Տրդատ Գ-ի կողմից իր քրոջ համար պալատ կառուցելը առնչվել է շատ ավելի խոր ավանդույթի հետ, որն իր դրսևորումն է գտել դեռևս Տրդատ Ա-ի արձանագրության մեջ՝ փորագրված ամրոցապատի վրա։ Թվում է, որ իրավացի է Հ. Բարթիկյանը, երբ գրում է. «Հնարավոր է, որ Գառնիի պալատը տրադիցիայով հետագայում ևս շարունակած լիներ մնալ որպես հայ Արշակունիների կանանց ամառային ապարանք, այդ թվում նաև Տրդատ Գ-ի կնոջ՝ Աշխենի և Տրդատի քրոջ՝ Խոսրովիդուխտի համար»[34]։ Ավելացնենք միայն, որ խոսքն այստեղ, ամենայն հավանականությամբ, ոչ թե միայն պալատի, այլ ամբողջ ամրոցի մասին է, և Գառնիի ամրոցը իր տաճարով և պալատական շենքերով թերևս հանդիսացել է Արշակունիների կանանց ամառային նստավայր։ Որ Արշակունիների մոտ այդ սովորությունը իսկապես կար, վկայում է Դվինի մոտ, Խոսրով արքայի անտառատնկման սահմաններում գտնվող Տիկնոնի ամրոցը, Գառնիից Արտաշատ տանող ճանապարհի վրա։ Մյուս կողմից, այն փաստը, որ Խորենացին Խոսրովի կառույցն անվանում է «ապարանս հովանաւորս», այսինքն՝ օգտագործում է նույն տերմինը, ինչով նա բնորոշում էր Գառնիի իսկապես «ամառային պալատ» լինելը, չի՞ նշանակում արդյոք, որ համենայն դեպս, սկզբնական շրջանում արքունիքը Արտաշատից Դվին էր տեղափոխվում հատկապես ամռան շոգ ամիսներին, երբ Արաքսի հեռանալու պատճառով առաջացած ճահճուտներից բարձրացող գարշահոտ գոլորշիները ողողում էին ամբողջ շրջակայքը։ Իսկ աշնանը թագավորն արքունիքի հետ միասին վերադառնում էր Արտաշատ։ Եվ միայն IV դարի 60-ական թվականների պատերազմից հետո, երբ վերջնականապես կործանվեց Արտաշատը, Դվինը դարձավ երկրի մայրաքաղաք (նկ. 6)։

Նկ. 6. Նստած մարդու բարձրաքանդակ (մարմար)։

33 Բ. Առաքելյանը միանգամայն հնարավոր է համարում, որ Գառնիում եղել է երկու արձանագրություն (Б. Н. Аракелян, Гарни, I, с. 68)։

34 Հ. Բարթիկյան, նշվ. հոդվ., էջ 232։

Այս ամենի հետ միասին չպետք է մոռանալ, որ Արշակունիները համառանոցային նստավայրեր ունեին նաև այլ շրջաններում, և դրանցից մեկն էր Ապարանը։

Գառնիի և Դվինի դաստակերտների միջև նշմարվող պատմական առընչությունները որոշակի հիմք են տալիս համադրելու նաև նրանց պալատական կենտրոնական դահլիճները։ Ճիշտ է, երկու տեղում էլ պահպանվել են պատերի ներքևի մասերը միայն, սակայն երկուսի հատակագծային լուծումներն էլ ակնհայտ են և որոշակի։ Այն, որ Խոսրովի պալատը կառուցվել է անմիջապես Գառնիի պալատից հետո, է՛լ ավելի հետաքրքիր և ուշագրավ է դարձնում դրանց համեմատությունը, քանզի Գառնիի պալատը որոշակի կերպով առնչվելով հելլենիստական մշակույթի հետ, ուներ սկզբունքային այլ լուծում, ինչ Խոսրովի պալատը՝ կառուցված արդեն քրիստոնեության հաղթանակից հետո։ Տարակույս չի կարող լինել, որ Գառնիում առաջին հարկի երկայնական պատերին հպված որմնամույթերը շարունակվել են նաև երկրորդ, հանդիսավոր հարկում։ Սակայն եթե այդ այդպես է, ապա նրանց առկայությունը անմիջականորեն պետք է կապված լիներ դահլիճի ծածկի հետ։ Այս պայմաններում բացառված չէ, որ հանդիպակաց պատերի որմնամույթերի միջև ձգվել են լայնանիստ կամարներ, որոնք և կրել են դահլիճի փայտե ծածկը։ Սակայն հնարավոր է, որ այստեղ օգտագործվել են եռակամար, ճակտոնապատերով ավարտվող լայնական հենարանները, որոնց վերին, թեքադիր մասերի վրա էլ հենվել են ծածկի գերանները։

Ուշագրավ են այն ընդհանրությունները, որ կան Գառնիի պալատական դահլիճի և Զվարթնոցի գահասրահի միջև, որտեղ առկա են երկայնական պատերի ուղղությամբ ձգվող լայն խորշերը։ Այս հանգամանքը, ինչպես նշվեց, կարելի է բացատրել Ներսեսի մեծ ակնածանքով դեպի Գառնին առհասարակ, որտեղ նա (659 թ.), թերևս Տրդատի հիշատակը հավերժացնելու համար, մեծ եկեղեցի է կառուցում՝ հպված հնավանդ հեթանոսական տաճարին, որը քրիստոնեության տարածման սկզբին սրբագործվել էր, իսկ մեջը փոքրիկ եկեղեցի էր կառուցվել[35]։ Հենց այս էլ փրկել էր հեթանոսական կառույցը կործանումից, և ճիշտ չէ այն ենթադրությունը, որ տաճարը իբր վեր էր ածվել Խոսրովիդուխտի հովանոցի։

Ներսես կաթողիկոսի համար այս հարցում, անշուշտ, նախօրինակ էր ծառայել իր նախորդների՝ կաթողիկոսներ Կոմիտասի և Եզրի գործունեությունը, երբ նրանք հոյակերտ տաճարներ էին կառուցել Հռիփսիմեի և Գայանեի դամբարանների վրա։ Գառնիում իրադրությունն այլ էր, և Ներսեսը եկեղեցին կառուցեց հեթանոսական տաճարի և պալատի միջև ընկած տարածքում։ Պալատն այդ ժամանակ կործանված էր, և եկեղեցու մի մասը ծածկեց պալատի հարավ-արևելյան անկյունը։ Սակայն այս ամենը ուներ իր նախապատմությունը. բանն այն է, որ Ներսես Գ-ի գործունեության մեջ նկատելի է ձգտումը՝ տաճարներ կառուցել հատկապես այն վայրերում, որոնք կապված էին Գրիգոր Լուսավորչի և Տրդատի հիշատակի հետ. այսպես՝ Բագավանում, Խոր Վիրապում, Զվարթնոցում (որտեղ, ըստ ավանդության, առաջին անգամ հանդիպել են Գրիգոր Լուսավորչն ու Տրդատը) և վերջապես Գառնիում։

Սկսած IV դարի երեսնական թվականներից հայկական աշխարհիկ ճարտարապետության զարգացման պրոցեսում նշմարվում է հորինվածքների զարգացման տրամաբանական մի որոշակի շղթա (Դվինի Արշակունիների մեծ պալատը՝ IV դարի երկրորդ քառորդ, V և VII դարերում Դվինում կառուցված կաթողիկոսական պալատները, Զվարթնոցի VII դարի կեսերին կառուցված պալատական համալիրը, Արուճի VII դարի երկրորդ կեսի պալատը), որ է՛լ ավելի անհրաժեշտ է դարձնում ավանդական բնույթ կրող ճարտարապետա-

---

35 Ленинградское отделение архива АН СССР, архив Н. Я. Марра, фонд 800, с. А—2930.

կան այդ հորինվածքների կազմավորման նախադրյալների և վաղ շրջանի օրակների բացահայտումը։

Ուրարտական նշանավոր կենտրոնների (Էրեբունի, Թելշեբաինի, Արգիշտիխինիլի) պեղումները, նրանց պալատական կառույցների սյունազարդ հորինվածքների հայտնաբերումը հնարավորություն տվեցին նշմարել միջնադարյան հայկական պալատական կառույցների ակունքները, նշել, որ ծագելով և զարգանալով ժողովրդական ճարտարապետության մեջ մշակված ձևերի հիման վրա, անցնելով զարգացման որոշակի շրջան, մոնումենտալ հորինվածքներն այնքան տրամաբանական էին, այնքան կենսունակ, որ չկորցրեցին իրենց նշանակությունը պատմական միանգամայն այլ, նոր պայմաններում։ Այս առնչությամբ մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժամանակագրական տեսակետից հաշորդ, արդեն հելլենիստական շրջանի պալատական կառույցները, շենքեր, որոնք ըստ էության անմիջականորեն նախորդել են և թերևս որոշակի նշանակություն ունեցել վաղ միջնադարյան աշխարհիկ ճարտարապետության այդ առավել նշանակալից հորինվածքների կազմավորման հարցում։

ГАРНИЙСКИЙ ДВОРЕЦ И МОВСЕС ХОРЕНАЦИ

СТЕПАН МНАЦАКАНЯН

Резюме

Раскопки крепости Гарни (рук.-акад. АН АрмССР Б. Н. Аракелян) открыли к северо-западу от античного храма дворцовый комплекс в составе зального колонного помещения и бани. Строительная техника этих сооружений и мозаика пола предбанника позволяют уверенно датировать дворец концом III в. н. э. Такая датировка подтверждается анализом целого ряда архитектурных фрагментов, деталей небольших статуй, рассчитанных на размещение в интерьере дворца. Важное значение для датировки дворца имеет сообщение Мовсеса Хоренаци. Он пишет, что царь Трдат III восстановил крепость, возвел богато отделанный скульптурами летний дворец для сестры своей Хосровидухт и оставил на стене дворца греческую надпись.

В специальной литературе доминирует мнение, согласно которому Хоренаци приписал Трдату III сооружения Трдата I, а дворцом Хосровидухт считал античный храм. Сравнительный анализ имеющегося материала указывает на то, что Хоренаци (один из образованнейших деятелей эпохи, бывавший на Западе и знакомый с греческой культурой) хорошо различал храм от здания дворца; отнюдь не случайно, что употребленным им для обозначения постройки в Гарни термином «*հովանոց*» он воспользовался и для обозначения дворца царя Хосрова в Двине. Хоренаци, несомненно, видел остатки дворца Хосровидухт, а также не дошедшую до нас греческую надпись Трдата III.

Гарнийский дворец, возведенный на рубеже принятия христианства, имеет важное значение для выявления путей эволюции светского зодчества Армении.